արժէքն է 80-ից սկսած մինչև 100—115 ռուբ. որ աղքատ գիւղականի համար մի ահագին գումար է։ Բայց ի սէր երկրագործութեան, ի սէր վար ու ցանքի և դաշտային ծանր աշխատանքների, Ուտիացի Հայը իւր բերանից կկտրի, իւր ընտանիքի անդամներին հագուստից կզրկի, ահագին տոկոսներով պարտքերի տակ կմտնի յատկապէս ուժեղ, արագաշարժ և լաւ լուծ կրող գոմէշներ ձեռք բերելու, որոնց համար համար իւր կեանքն անգամ չի խնայում։

Ահագին տարածութեամբ Ուտիացի Հայը ոչ միայն ամեն տեսակ հացահատիկների և բրնձի մշակութեամբ է պարապում, այլ և անասնաբուծութեամբ և այգեպանութեամբ։ Ուտիացին իւր տան չորս կողմը զարդարում է զանազան տեսակ պտղատու այգիներով, որոնց մէջ հազարաւոր և բիւրաւոր թթենու մատաղահաս ծառեր է տընկում, յատկապէս մետաքսի որդերին կերակրելու համար։ Մետաքս, որ Ուտիացոց աշխարհի աղգաբնակութեան գլխաւոր և շահաւէտ պարապմանց ճիւղերից մինն է։ Այգիներում և տան մօտակայ արօտատեղերում նոյնպէս դուք կտեսնէք ընտիր կաղնու բազմաթիւ տնկարաններ՝ ուղիղ և կանոնաւոր գծերի ուղղութեամբ տնկուած շարիշար, որոնք առատ տարիներին ահագին արդիւնք են տալիս ժրաջան մշակող գիւղականին։ Ուտիացոց աշխարհում խաղողի վազի մշակութիւնը իւր նախնական անդրջրհեղեղեան վիճակի մէջն է դեռ ևս. այսինքն՝ խաղողի վազերը առհասարակ փաթաթուած են լինում ահագին ծառերի վրայ։ Այն-